ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ 2011-2013ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՍԵՄԻՆԱՐԻ

ք.Երևան
04 մարտի, 2012թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԱԽԱԲԱՆ

II. ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ

III. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

IV. ՀԵԻԱ-Ի ԱՊԱԳԱՅԻ ՊԱՏԿԵՐԸ

V. ՀԵԻԱ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

VI. ՀԵԻԱ-Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ

VII. ԱՄՓՈՓՈՒՄ

I. ՆԱԽԱԲԱՆ

2012թ.-ի մարտի 4-ին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից կազմակերպվեց և անցկացվեց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (այսուհետև՝ ՀԵԻԱ) 2011-2013թթ. գործունեության համար նախատեսված երկարաժամկետ Ռազմավարական պլանի վերանայման սեմինար:

Ռազմավարական պլանի մշակման սեմինարին (այսուհետ՝ սեմինար) ներգրավվել էին 12 մասնակիցներ, որոնց թվում 11-ը ՀԵԻԱ աշխատակից: Ընդհանուր առմամբ մասնակցեցին.

- ՀԵԻԱ-ի 7 լիիրավ անդամներ (այդ թվում՝ 1-ը հանդիսանում է ՀԵԻԱ-ի վարչության անդամներ, 1-ը՝ ՀԵԻԱ-ի ակումբների ղեկավար).
- ՀԵԻԱ 1 կամավոր.
- ՀԵԻԱ 4 անդամ չհանդիսացող 4 անձ:

Սեմինարի նպատակներն էին՝

- վերանայել կազմակերպության առաքելությունը,
- վերանայել կազմակերպության ապագայի պատկերը և արժեքները,
- ՀԵԻԱ-ի կազմակերպական զարգացմանն ուղղված ռազմավարական նպատակների վերաձևակերպում, դրանց խնդիրների և այդ այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ գործողությունների վերաձևակերպում և պատասխանատու անձանց որոշում,
- վերանայել կազմակերպության 2011-2013թթ. երկարաժամակետ Ռազմավարական պլանը:

Ռազմավարական պլանի վերանայման սեմինարի արդյունքն է հանդիսանում 2011-2013թթ. գործունեության համար նախատեսված վերանայված Ռազմավարական պլանը, որը առաջիկայում կներկայացվի ՀԵԻԱ-ի վարչության նիստին՝ այն վարչության կողմից հաստատելու նպատակով:

II. ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ

ՀԵԻԱ Ռազմավարական պլանի մշակման գործընթացը իրականացվեց ինտերակտիվ սեմինարի ձևով, որի ընթացքում կիրառվեց մի քանի մեթոդների համադրություն՝ PPT ներկայացում, «ուղեղի գրոհ», մետապլան, քննարկումներ: Սեմինարը անցկացվեց մեկ օր՝ ընդհանուր առմամբ 5 ժամ 30 րոպե տևողությամբ:

ՀԵԻԱ Ռազմավարական պլանի մշակման գործընթացը բաղկացած էր հետևյալ հիմնական փուլերից.

1. Ներածություն. Ի՞նչ է ռազմավարական պլանը և ինչու՞ է իրականացվում պլանավորումը.
2. ՀԵԻԱ-ի ապագայի պատկերի, առաքելության և արժեքների վերանայում և ներկայացում.
3. ՀԵԻԱ-ի գործունեության հիմնական ուղղությունների ներկայացում և ռազմավարական նպատակների վերաձևակերպում, համապատասխան ռազմավարական խնդիրների վերանայում.
4. ՀԵԻԱ-ի կազմակերպական զարգացմանն ուղղված ռազմավարական նպատակների ձևակերպում՝ հիմնվելով ինքնագնահատման ընթացքում կատարված SWOT վերլուծության արդյունքների վրա.
5. Կազմակերպության ենթահամակարգերի SWOT վերլուծություն (ղեկավարում, կառավարում, ծրագրեր և ծառայություններ, ֆինանսական կայունություն, մարդկային ռեսուրսներ, հարաբերություններ այլ կազմակերպությունների հետ/շահերի պաշտպանություն),
6. ՀԵԻԱ-ի 2011-2013թթ. վերանայված Ռազմավարական պլանի նախագծի կազմում:

ՀԵԻԱ-ի 2011-2013թթ. Ռազմավարական պլանի վերանայման գործընթացը կազմակերպվեց և իրականացվեց ՀԵԻԱ-ի անդամ, ՇՊԱԿ-ների ցանցի համակարող/ավագ իրավախորհրդատու Սյուզաննա Սողոմոնյանի կողմից:

ՀԵԻԱ-ի Ռազմավարական պլանի մշակման գործընթացի նախապատրաստական և իրականացման գործընթացը բաղկացած էր հետևյալ քայլերից.

1. գործընթացի մեթոդների մշակում և վերլուծություն,
2. նախապատրաստական աշխատանքներ.
    - սեմինարի նյութերի կազմում,
    - բաժանվող նյութերի, նամակների, փաթեթների նախապատրաստում
    - նյութերի բաժանում մասնակիցներին,
    - սենյակի նախապատրաստում,
    - ֆլիպ չարթերի և PPT ներկայացման նախապատրաստում,
3. ներածական նյութերի ներկայացում սեմինարի փուլերի առնչությամբ,
4. ՀԵԻԱ-ի գործունեության ուղղությունների ներկայացում,
5. կազմակերպության առաքելության վերանայում,
6. կազմակերպության ապագայի պատկերի և արժեքների վերանայում,
7. ՀԵԻԱ-ի կազմակերպական զարգացմանն ուղղված ռազմավարական նպատակների ձևակերպում, դրանց խնդիրների, և այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ գործողությունների և պատասխանատու անձանց սահմանում,
8. քննարկումների արդյունքների գրանցում ֆլիպ չարթերի վրա,
9. ՀԵԻԱ-ի 2011-2013թթ. վերանայված Ռազմավարական պլանի նախագծի մշակում,
10. 2011-2013թթ. վերանայված Ռազմավարական պլանի նախագծի մուտքագրում համակարգիչ,
11. ՀԵԻԱ-ի 2011-2013թթ. վերանայված Ռազմավարական պլանի մշակման գործընթացի և արդյունքների վերաբերյալ հաշվետվության պատրաստում:

III. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵԻԱ-ի 2011-2013թթ. Ռազմավարական պլանի մշակման գործընթացի սեմինարի սկզբում ներկաների ուշադրությանը ներկայացվեց ներածական նյութ, որը վերաբերում էր ռազմավակարական պլանավորմանը: Մասնավորապես, արծարծվեցին այն հարցերը, որոնք վերաբերում էին ռազմավարական պլանավորման անհրաժեշտությանը, մասնավորապես՝ ինչու՞ է այն իրականացվում, ի՞նչ նպատակով է այն իրականացվում, ի՞նչ է այն տալիս, ինչպե՞ս են օգտագործվում դրա արդյունքները:

Հաջորդ փուլում ներկաների ուշադրությանը ներկայացվեց ՀԵԻԱ-ի գործող առաքելությունը, ապագայի պատկերը և արժեքները, որոնց հիման վրա վերաձևակերպվեց ՀԵԻԱ-ի ապագայի պատկերը, առաքելությունը և արժեքները: Այնուհետև, աշխատանքային խմբին ներկայացվեց ՀԵԻԱ-ի գործունեության հիմնական ուղղությունները, որոնց արդյունքում ձևակերպեց ռազմավարական նպատակները և համապատասխան ռազմավարական խնդիրները: Քննարկումների արդյունքները ֆիքսվեցին ֆլիփ չարթերի վրա:

Հիմնվելով 03.03.2012թ.-ին կայացած ինքնգնահատման գործընթացում կատարված SWOT վերլուծության արդյունքների վրա՝ ձևակերպվեցին ռազմավարական նպատակները՝ ուղղված ՀԵԻԱ-ի կազմակերպական զարգացմանը:

Ռազմավարական պլանի մշակման գործընթացի սեմինարի արդյունքները ներկայացվում են ստորև:

IV. ՀԵԻԱ-Ի ԱՊԱԳԱՅԻ ՊԱՏԿԵՐԸ

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իրավունքի ոլորտում գործող ամենազդեցիկ, հայտնի, հզոր և հանրությանը օգտակար կազմակերպություններից է:

V. ՀԵԻԱ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Կազմակերպության առաքելությունն է.

Նպաստել Հայաստանում նոր մտածելակերպի, մասնագիտական բարձր կարողությունների և բարոյական նկարագրի տեր կիրթ իրավաբանների սերնդի ձևավորմանը, հասարակությունում բարձր իրավական մշակույթի արմատավորմանը և իրավունքի գերակայության հաստատմանը:

Կազմակերպության արժեքներն են.

ա) Համամարդկային և հայ բազմադարյա արժեքների և ժառանգության վրա խարսխված արդի իրավական մշակույթ,

բ) Իրավագիտակից, կիրթ և սեփական իրավունքների պաշտպանությունը գիտակցող հասարակություն,

գ) Մարդու պաշտպանված իրավունքներ,

դ) Մասնագիտական բարձր գիտելիքներ ունեցող և բարոյական արժեքներ կրող իրավաբաններ,

ե) Հզոր քաղաքացիական հասարակություն:

VI. ՀԵԻԱ-Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ

6. ՀԵԻԱ ռազմավարական նպատակները, խնդիրները և գործողությունների պլանը

Նպատակ 1. Հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացում, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն, քաղաքացիների շահերի պաշտպանություն և աջակցություն:

Խնդիր 1.1

Անվճար իրավաբանական ծառայության տրամադրում կոռուպցիոն բնույթի գործերով և սոցիալապես անապահով ու իրավաբանական օգնություն ստանալու սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց:

Գործողություն 1.1.1

ՀԵԻԱ-ի կողմից գործարկվող ՇՊԱԿ-ների և ՇՊԱԸ-ների միջոցով, ինչպես նաև ՀԵԻԱ-ի գրասենյակների միջոցով *անվճար իրավաբանական օգնության մատուցում կոռուպցիոն բնույթի գործերով սոցիալապես անապահով և իրավաբանական օգնություն ստանալու սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց* ՝ գրասենյակներում, հեռախոսային և ինտերնետային կապի, թեժ գծի, ինչպես նաև շրջիկ և համայնքային այցելությունների միջոցով):

Ժամանակահատված - 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ նախագահ, ՀԵԻԱ վարչության անդամ, ՀԵԻԱ հանձնաժողովներ, ՀԵԻԱ գրասենյակներ, ՀԵԻԱ-ի կողմից գործարկվող ՇՊԱԿ-ներ և ՇՊԱԸ-ներ:

Գործողություն 1.1.2

Կոռուպցիոն, - հասարակական կարևոր նշանակություն ունեցող դեպքերում ծայրահեղ կարիքավոր և իրավաբանական օգնություն ստանալու սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց, ինչպես նաև ապաստան հայցողների գործերով ներկայացուցչության իրականացում՝ դատական, պետական, տեղական և այլ ատյաններում:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ նախագահ, ՀԵԻԱ վարչության անդամ ՀԵԻԱ մարզային գրասենյակներ և ՇՊԱԿ-ներ:

Գործողություն 1.1.3

ՀԵԻԱ ՇՊԱԿ-ներ և ՇՊԱԸ-ներ դիմած անձանց կողմից բարձրացված հարցերի և բերված դիմումների, բողոքների վերլուծություն, խնդիրների, կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հասցեագրում համապատասխան պետական, տեղական և այլ մարմիններին, անվճար փաստաբանական ծառայությունների մատուցում Երևանի, Գյումրու, Վանաձորի, Իջևանի, Աշտարակի (ընդունարաններ՝ Ապարանում և Թալինում), Հրազդանի, Արարատի, Եղեգնաձորի, Կապանի ՇՊԱԿ-ների և ՇՊԱԸ-ների կողմից:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ վարչության անդամ, ՀԵԻԱ հանձնաժողովներ, ՀԵԻԱ ՇՊԱԿ-ներ և ՇՊԱԸ-ներ:

Գործողություն 1.1.4

Մասնագիտական օգնության և աջակցության ցուցաբերում փոքր և միջին ձեռնարկատերերին՝ նրանց իրավական իրազեկության մակարդակի բարձրացման, խախտված իրավունքների պաշտպանության և ոլորտում բարեփոխումների իրականացման նպատակով:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ նախագահ, ՀԵԻԱ մարզային գրասենյակներ և ՇՊԱԿ-ներ:

Գործողություն 1.1.5

Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության վերաբերյալ խախտումների արագ արձագանքում, դրանց համակարգում և հանրայնացում:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ փոխնախագահ, Մարդու իրավունքների, իրավաբանական օգնության, եվրաինտեգրման և միջազգային համագործակցության հանձնաժողով, ՀԵԻԱ մարզային գրասենյակներ և ՇՊԱԿ-ներ և ՇՊԱԸ-ներ:

Խնդիր 1.2

Բարձր իրավական մշակույթի ձևավորում, բնակչության իրավական իրազեկության մակարդակի բարձրացում

Գործողություն 1.2.1

Մատչելի մեթոդներով իրավաբանական տեղեկատվության տարածում, այդ թվում՝ ՀԵԻԱ գրասենյակներ և ՇՊԱԿ-ներ դիմած անձանց կողմից բարձրացված հարցերի, նրանց կողմից բերված դիմումների, բողոքների և դրանցում առկա կոռուպցիոն ռիսկերի վերլուծության վիճակագրության ու վերհանված խնդիրների հիման վրա իրավաբանական բնույթի տեղեկատվական թերթիկների նախագծում, տպագրում և տարածում, հանրային իրազեկման սեմինարների կազմակերպում և անցկացում:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.

Պատասխանատու - ՀԵԻԱ վարչություն, հանձնաժողովներ, մարզային գրասենյակներ, ՇՊԱԿ-ներ և ՇՊԱԸ-ներ:

Գործողություն 1.2.2

Մարդու իրավունքների պաշտպանության և հակակոռուպցիոն հաջողված օրինակների տպագրում ու հանրայնացնում:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ պատասխանատու քարտուղար, Մարդու իրավունքների, իրավաբանական օգնության, եվրաինտեգրման և միջազգային համագործակցության հանձնաժողով, մարզային գրասենյակներ, ՇՊԱԿ-ներ և ՇՊԱԸ-ներ:

Գործողություն 1.2.3

Ինտենետային բլոգի ստեղծում և գործարկում, ՁԼՄ-ների հետ նոր կապերի հաստատում:

Ժամանակահատված – 2011-2013թթ.

Պատասխանատու – ՀԵԻԱ նախագահ, մարզային գրասենյակներ, ՇՊԱԿ-ներ և ՇՊԱԸ-ներ:

Գործողություն 1.2.4

Իրավաբանական ռեսուրս կենտրոնների հիմնում ՀԵԻԱ գործունեության թիրախ աշխարհագրական տարածքներում:

Ժամանակահատված – 2011-2013 թթ.՝ յուրաքանչյուր տարի առնվազն երկու կենտրոն:

Պատասխանատու - ՀԵԻԱ նախագահ, ՀԵԻԱ պատասխանատու քարտուղար, ՀԵԻԱ Իրավաբանական ուսուցման և տեղեկատվության հանձնաժողով:

Խնդիր 1.3

Հակակոռուպցիոն կենտրոնների պահպանում, հզորացում և ավելացում:

Գործողություն 1.3.1

Ֆինանսական միջոցների հայթայթում:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.

Պատասխանատու - ՀԵԻԱ նախագահ, ՀԵԻԱ վարչություն, Ֆինանսական ֆոնդերի հայթայթման հարցերով աշխատանքային խումբ:

Գործողություն 1.3.2

Ձեռք բերված համագործակցության պահպանում և ակտիվացում պետական մարմինների հետ:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.

Պատասխանատու - ՀԵԻԱ նախագահ, ՀԵԻԱ ՇՊԱԿ-ներ և ՇՊԱԸ-ներ:

Գործողություն 1.3.3

Կադրերի վերապատրաստում, նոր կադրերի ներգրավում:

Ժամանակահատված 2011-2013 թթ.

Պատասխանատու – ՀԵԻԱ նախագահ, ՀԵԻԱ վարչություն, ՀԵԻԱ հանձնաժողովներ:

Ակնկալվող արդյունքներ.

ա) Կոռուպցիայի զոհ դարձած քաղաքացիները, ինչպես նաև ՀՀ բնակչության սոցիալապես անապահով խավերը և իրավաբանական օգնություն ստանալու սահմանափակ հնարավորություն ունեցող անձինք, այդ թվում ապաստան հայցողները, կունենան հնարավորություն՝ ստանալու որակյալ անվճար իրավաբանական ծառայություններ, որոնց շնորհիվ կպաշտպանվեն շահառուների խախտված իրավունքներն ու կլուծվեն նրանց կողմից բարձրացված հարցերը, ինչն էլ կնպաստի ՀՀ-ում օրենքի գերակայության հաստատմանը: ՀՀ-ում գործող փոքր և միջին ձեռնարկատերերին կցուցաբերվի մասնագիտական օգնություն և աջակցություն՝ վերջիններիս խախտված իրավունքների պաշտպանության, նրանց իրավական իրազեկության մակարդակի բարձրացման և այդ ոլորտում բարեփոխումների իրականացման նպատակով:

բ) Կձևավորվի բարձր իրավական մշակույթ, որը կհանգեցնի ՀՀ-ում բնակչության իրավական իրազեկության մակարդակի բարձրացմանը:

գ) ՀԵԻԱ գրասենյակներ և ՇՊԱԿ-ներ դիմած քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի ու բերված դիմումների, բողոքների ուսումնասիրման հիման վրա կբացահայտվեն այն խնդիրներն ու կոռուպցիոն ռիսկերը, որոնց լուծման նպատակով կտպագրվեն ու ՀԵԻԱ շահառուների շրջանում կտարածվեն համապատասխան իրավաբանական բնույթի տեղեկատվական թերթիկներ:

դ) Մարդու իրավունքների խախտումները և կոռուպցիոն բնույթի դեպքերը արագ արձագանք կստանան ՀԵԻԱ-ի արագ արձագանքման խմբի կողմից, ինչպես նաև՝ դրանք կենթարկվեն համակարգման և հասանելի կլինեն բոլոր շահագրգիռ անձանց համար:

ե) ՀԵԻԱ գրասենյակներ դիմած քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի ու բերված դիմումների, բողոքների ուսումնասիրման և ծառայությունների մատուցման նոր մեթոդների կիրառման հետևանքով անընդհատ կբարելավվեն և աշխարհագրորեն կընդարձակվեն ՀԵԻԱ կողմից մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունները՝ ընդգրկելով նաև իրավաբանական օգնություն ստանալու սահմանափակ հնարավորություններ ունեցող հեռավոր գյուղական համայնքները:

Նպատակ 2. Երիտասարդ իրավաբանների, փաստաբանների, իրավաբան ուսանողների մասնագիտական ունակությունների բարձրացմանն ուղղված գործունեություն

Խնդիր 2.1

Կրթական միջոցառումների իրականացում:

Գործողություն 2.1.1

ՀՀ օրենսդրության տարբեր ճյուղերին, Միջազգային, Եվրոպական իրավունքին, մարդու իրավունքներին և դրանց պաշտպանության մեխանիզմներին նվիրված ուսուցումների, սեմինարների, գիտաժողովների և մրցույթների կազմակերպում:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ պատասխանատու քարտուղար, հանձնաժողովներ, մարզային գրասենյակներ, ՇՊԱԿ-ներ և ՇՊԱԸ-ներ, ԻՈՒԲ, Հայաստանում Ջեսափի ակումբ:

Գործողություն 2.1.2

Մասնագիտական նյութերի տպագրում և տարածում, այդ թվում նաև առցանց:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ պատասխանատու քարտուղար, ՀԵԻԱ Իրավաբանական ուսուցման և տեղեկատվության հանձնաժողով:

Գործողություն 2.1.3

Սույն Ռազմավարական պլանի Խնդիր 1.2, Գործողություն 1.2.4, ինչպես նաև իրավաբանական ռեսուրսների թարմացում ՀԵԻԱ գրասենյակներում և ՇՊԱԿ-ներում, ՇՊԱԸ-ներում:

Ժամանակահատված – 2011-2013 թթ.

Պատասխանատու - ՀԵԻԱ նախագահ, ՀԵԻԱ պատասխանատու քարտուղար, ՀԵԻԱ Իրավաբանական ուսուցման և տեղեկատվության հանձնաժողով:

Խնդիր 2.2

Ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ամրապնդում, ԻՈՒԲ գործունեության ակտիվացում:

Գործողություն 2.2.1

Ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ամրապնդում՝ նոր գործընկերներ ձեռք բերելու և կապեր հաստատելու միջոցով:

Ժամանակահատված – 2011-2013 թթ.

Պատասխանատու – ՀԵԻԱ մարզային գրասենյակներ, ՇՊԱԿ-ներ և ՇՊԱԸ-ներ, ԻՈՒԲ:

Գործողություն 2.2.2

Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոններում իրավաբան ուսանողների պրակտիկայի կազմակերպում և անցկացում:

Պատասխանատու – Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների ավագ իրավաբաններ:

Ժամանակահատված – 2011-2013 թթ.

Խնդիր 2.3

ՀԵԻԱ կազմակերպական և ինստիտուցիոնալ զարգացում:

Գործողություն 2.3.1

ՀԵԻԱ հանձնաժողովների, ակումբների, իրավաբան ուսանողների բաժանմունքի և մարզային գրասենյակների ամենամյա աշխատանքային պլաններով նախատեսված աշխատանքների իրականացում և միջոցառումների, այդ թվում փորձի փոխանակման և վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ վարչության անդամ, ՀԵԻԱ հանձնաժողովներ, ակումբների, իրավաբան ուսանողների բաժանմունք և մարզային գրասենյակներ:

Գործողություն 2.3.2

Հայաստանի երիտասարդ իրավաբաններին միավորող կազմակերպության՝ ՀԵԻԱ-ի հանձնաժողովների, ակումբների և իրավաբան ուսանողների բաժանմունքի անդամների հարակից հմտությունների զարգացում՝ անգլերենի, համակարգչային գրագիտության, սոցիալապես անապահով քաղաքացիներին ցուցաբերվելիք իրավաբանական օգնության առանձնահատկությունների, մարդու իրավունքների խախտումների արագ արձագանքման, մասնագիտական էթիկայի կանոնների, իրավաբանների կողմից Pro Bono աշխատանքների կազմակերպման վերաբերյալ, ինչպես նաև այլ անհրաժեշտ դասընթացների, հանգստի, մշակութային և մարզական տարբեր միջոցառումների կազմակերպում և անցկացում:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ վարչության անդամ, ՀԵԻԱ հանձնաժողովներ, ակումբների, իրավաբան ուսանողների բաժանմունք և մարզային գրասենյակներ:

Գործողություն 2.3.3

ՀԵԻԱ Գավառի և Իջևանի գրասենյակների համար սեփական տարածքների ձեռք բերում, ՀԵԻԱ-ի Գյումրիի, Վանաձորի, Կապանի գրասենյակների ուսումնական և ակումբային սենյակների տարածքների վերանորոգում:

Ժամանակահատված – 2011-2013թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ նախագահ, մարզային գրասենյակներ:

Գործողություն 2.3.4

Հայաստանի երիտասարդ իրավաբաններին միավորող կազմակերպության՝ ՀԵԻԱ-ի վեց ենթահամակարգերի (ղեկավարում, կառավարում, մարդկային ռեսուրսներ, ծրագրեր և ծառայություններ, ֆինանսական կայունություն, հարաբերություններ այլ կազմակերպությունների հետ) զարգացում՝ ըստ ամենամյա զարգացման պլանի:

Ժամանակահատված – 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ պատասխանատու քարտուղար:

Ակնկալվող արդյունքներ.

ա) Կբարձրանա նոր սերնդի երիտասարդ իրավաբանների մասնագիտական և հարակից կարողություններն ու հմտությունները:

գ) Կհզորանա Հայաստանի երիտասարդ իրավաբաններին միավորող կազմակերպության՝ ՀԵԻԱ-ի մասնագիտական հանձնաժողովների, ակումբների և իրավաբան ուսանողների բաժանմունքի կարողությունները և ազդեցությունը ՀՀ-ում դատահիրավական բարեփոխումների իրականացման և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում:

դ) Կհզորանա Հայաստանի երիտասարդ իրավաբաններին միավորող կազմակերպության՝ ՀԵԻԱ-ի մասնագիտական և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ ռեսուրսների բազան:

ե) Կզարգանան Հայաստանի երիտասարդ իրավաբաններին միավորող կազմակերպության՝ ՀԵԻԱ-ի ենթահամակարգերը, որոնք կբերեն ՀԵԻԱ հզորացմանը և ՀԵԻԱ կողմից իրականացվող գործունեության և ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

Նպատակ 3. Հանրային ծառայություններ մատուցող պետական, ինչպես նաև արդարադատություն իրականացնող մարմինների գործունեության կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, թափանցիկության և հաշվետվողականության ապահովում:

Խնդիր 3.1.

Պետական, տեղական ինքնակառավարման արդարադատություն իրականացնող և հանրային ծառայություններ մատուցող մարմինների գործունեության կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով հանրայնացման, քաղաքացիների հզորացման, մասնակցային և հասարակական մոնիտորինգային գործընթացների (այդ թվում համապատասխան օրենսդրության) իրականացում:

Գործողություն 3.1.1

, Քաղաքացիների հզորացման, մասնակցային և հասարակական մոնիտորինգային գործընթացների (այդ թվում համապատասխան օրենսդրության) իրականացմում և հանրայնացում՝ հանրապետական, տեղական և ոլորտային նշանակության ծրագրերի միջոցով, գործընկեր կազմակերպությունների և փորձագետների հետ համատեղ:

Ժամանակահատված - 2011-2013 թթ.:

Պատասխանատու - ՀԵԻԱ վարչության անդամ, ՀԵԻԱ հանձնաժողովներ, ակումբների, իրավաբան ուսանողների բաժանմունք, մարզային գրասենյակներ, ՇՊԱԿ-ներ:

Խնդիր 3.2

Նպաստել պետական և տեղական մարմիններում արդյունավետ կառավարման համակարգի ներդրմանը՝ և կոռուպցիայի դեմ պայքարում:

Գործողություն 3.2.1

պետական, տեղական ինքնակառավարման, արդարադատություն իրականացնող և հանրային ծառայություններ մատուցող մարմինների գործունեության մոնիթորինգ, համապատասխան ընթացակարգային և համակարգային բարեփոխումների ներկայացում և իրականացում:

Ժամանակահատված – 2011-2013 թթ.

Պատասխանատու – ՀԵԻԱ նախագահ, արդյունավետ կառավարման, հակակոռուպցիոն և մոնիտորինգային հարցերով հանձնաժողով, մարզային գրասենյակներ, ՇՊԱԿ-ներ և ՇՊԱԸ-ներ:

Ակնկալվող արդյունքներ.

ա) ՀՀ հասարակության շրջանում փաստաբանության ինստիտուտի դերի և հեղինակության բարձրացում, փաստաբանների ինքնուրույնության և անկախության զարգացում:

բ) ՀՀ հասարակության շրջանում դատական համակարգի և իրավապահ մարմինների գործունեության թափանցիկության ապահովում:

գ) ՀՀ հասարակության շրջանում վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների դերի և նշանակության բարձրացում:

դ) ՀՀ օրենսդրության բացերի վեր հանում և դրանց հիման վրա արված առաջարկների միջոցով օրենսդրության (այդ թվում դատահիրավական համակարգի, փաստաբանության, ՀԿ-ների և այլն) բարեփոխումներ:

ե) Դատական գործերի հաջողված օրինակները կխթանեն քաղաքացիների կողմից իրենց իրավունքների պաշտպանության հարցերին հետամուտ լինելուն, ինչպես նաև կբարձրացնեն ՀԵԻԱ հեղինակությունը հասարակության շրջանում:

VII. ԱՄՓՈՓՈՒՄ

Կազմակերպության կայուն զարգացումն ապահովելու համար մենք կարիք ունենք իմանալ, թե որտեղ է այն գտնվում տվյալ պահին, արձանագրել կազմակերպության վիճակը, սահմանել այն նպատակներն ու խնդիրները, որոնք անհրաժեշտ է դարձնել ռազմավարական և դրանց ուղղությամբ մշակել հատուկ գործողությունների պլան: Այդ իսկ նպատակով յուրաքանչյուր տարի ՀԵԻԱ-ն անց է կացնում Ռազմավարական պլանի մշակման սեմինար և Ռազմավարական պլանի վերանայման սեմինար, որի արդյունքներն ընդգրկվում են կազմակերպության երկարաժամկետ Ռազմավարական պլանում: